




Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առևտուրէն 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հողատիրութիւնը Ա. խաղաղարի գաւառում. Նամակ Աղստաֆայից. Նամակ Ներքին-Ախտայից. Նամակ Մեղրիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական թագուհու զանգուան ճառը. Նամակ Շվեդիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՒԻՆԵՐ.—ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տղամարդկանք:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՈՂԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԱՍԻՔԱՆԱՔԻ ԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպէս յայտնի է, 1886 թին կառավարութեան կողմից կարգադրութիւն եղաւ, որ մեր գաւառի գիւղատերերի հողերը զատվեն արքունական հողերից, որ և սկսվեց տեղի ունենալ սոյն թվի յուլիս ամսին:

Գործն ընթացաւ հետեւալ կերպով. երկրաչափները բոլոր հողատերերին բաժանեցին հրաւիրաթղթեր. վերջիններիս սրտերը բաւական դող ընկաւ, թէ մի գուցէ երկրաչափ պահանջի նրանցից կուպիլա (կալուածադիր), և եթէ այդպիսի թերթեր չը կարողացան ներկայացնել, արդեօք այնուհետև իրանք կը ճանաչվեն իբրև հողատերեր՝ թէ ոչ: Գուցէ ընթերցողը կը հարցնէ մեզ թէ միթէ մի որ և է հողատէր կամ գիւղատէր կարող է կուպիլա չունենալ: Այո, մեզանում կան այնպիսի սիններ, որոնք տիրում են գիւղերի առանց հաստատութեան. սակաւ չեն և այնպիսիները, որոնք թէև ունեն կուպիլա մի գիւղի կամ մի հողի համար, բայց դրո՛ք դնելով զանազան խորամանկութիւններ՝ տիրում են դրանց պէս երբեք կամ աւելին: Վերջապէս երբ հողատէրերը տեսան, որ իրանցից չէ պահանջվում հաստատութիւն, պահանջ չը կան նաև երկրաչափի կողմից, ոչինչ չանք չը խնայեցին մեծացնելու իրանց՝ փոքրիկ հողերը արքունական հողերով, քանի որ նրանց ապօրինի գործողութեան առաջ մի որ և է խոչնդոտ կամ արգելք չէր դնում Զէ կարելի չը

նկատել, որ կային մի քանի բարեխղճ հողատէրեր, որոնք բաւականացան իրանց սեփական հողերով. իսկ մնացեալները առհասարակ սկսեցին խել անպաշտպան հողագործի ձեռքում գտնված արքունի հողերը հետեւալ միջոցներով երկրաչափը հրաւիրում է հողատիրոջ, թէ այս ինչ օրը նշանակած տեղը պէտք է լինել: Նոյն երկրաչափը հրաւիրում է նաև կառավարութեան կողմից նշանակված աստիճանաւորին և արքունական գիւղի հասարակութիւնից հաւատարմատարներ, որոնք նոյնպէս պէտք է ներկայ գտնվեն արքունական նախնի և աղայական հողերի որոշման ժամանակ: Այդպիսի արարուածները դէմ բողոքում են գիւղականների կողմից յիշեալ հաւատարմատարները երկրաչափի և աստիճանաւորների առաջ անելով, որ աղանց ցոյց է տալիս իբրև իր սեփականութիւն այն արքունական հողերը, որոնցով օգտվել է մեր հասարակութիւնը վաղուց ի վեր: Այս բողոքին պատասխանում են երկրաչափը և աստիճանաւորը, որ աղան արքունական հողերը ցոյց տալով իբրև իր սեփականութիւն՝ չէ կարող տիրել, քանի որ սկզբից չէր օգտվում, միայն դուք ճշմարտագէտ ցոյց տուէք ձեր գիւղի սահմանները, որոնցով օգտվում է ձեր հասարակութիւնը առանց բնահրայի: Հաւատարմատարները և արքունի հողերի պաշտպան աստիճանաւորը ցոյց են տալիս արքունական հողերի սահմանը՝ խաւովեամբ որոշելով հողատիրոջ սահմանից: Երկրաչափը այդ օրվա գործն աւարտելուց յետոյ, դրում է դաշտային գրքում (полевой журналъ) արձանագրութիւն, որ նշանակում է հողատիրոջ, աստիճանաւորի և հաւատարմատարների ցոյց տուած սահմանները: Այդ արձանագրութիւնը կապնուցուց յետոյ հողատիրոջ, աստիճանաւորին և հաւատարմատարներին ստորագրել է տալիս Ապա յայտնում է նրանց թէ, ով որ ինչ տեղից օգտվել է մինչև այժմ, դարձեալ օգտվելու է նոյն տեղերից, իսկ միջևի տեղերից օգտվելու են նրանք, որոնք օգտվել են մինչև այն միջակայքին:

Բայց հարց է առաջ գալիս թէ արդեօք այդ կարգադրութեան մոտիկ տուող կայ: Հողատէրը

այդ օրից սկսած տիրապետում է արդէն գիւղացու ձեռքի տակ գտնված արքունական հողերին: Մեր գաւառում գտնված աղալը գիւղերը տրված են գիւղացիներին նա ղէլ ով, որից հողատէրը ստանում է բերքի մի տասներորդ մասը. այն ինչ, այն հողերը, որ հողատէրը նորից աւելացրեց իր ունեցածի վրա, կիսով է ցանել տալիս, այսինքն բերքից 50% է վերցնում:

Հողատէրերը իրանց հողերը տալիս են գիւղացուն պայմանագրերով և ըստ պայմանի օտանում են իրանց բաժինը. մի և նոյն ժամանակ նրանք կամենում էին օգուտ քաղել այժմ իսկ և իրանց սեփականութիւն համարած արքունական հողերից, բայց պայմանագրերը չը թոյլ տուին նրանց այդ համարակալ քայլն անելու, ասելով որ իրանք պայմանագրված են ամբողջ սահմանով: Գտնվեցան և այնպիսի հողատէրեր, որոնք ունենալով այդ վերոյիշեալ պայմանները, չանվեցան արքունական իսկ ձեռքից՝ օգուտ քաղելով գիւղացու տղիտութիւնից: Իսկ վերոյիշեալ պայմանների ժամանակամիջոցը լրանալուց անմիջապէս յետոյ սկսեցին իբրև կատարեալ սեփականատէրեր օգտվել իսկ արքունական հողերից, որոնցից մինչև այդ ժամանակ օգտվել էր խեղճ գիւղացին:

Այս գործողութիւնը սկսվեցաւ 1886 թին և վերջացաւ 1888 թին: Յարուցած վէճերը վերաբերում էին միայն արքունի հողերին. այն ինչ հողատէրերի միջանցից սահմանները բաժանելու ժամանակ (1888 թին) կարող ենք ասել համարձակ կերպով, վէճեր չը ծագեցան, որովհետև երկու սահմանակից կալուածատէրերը միմեանցից չէին կարող յարկաւորել: Բացառութիւնները քիչ են, որոնցից կարելի է համարել մէկը մի կողմից Հօբամ գիւղի և միւս կողմից Ախալցխայի ու Գրկիլի եկեղեցու մի կապալառուի վէճը:

Վերջին օրերս կրկին խռովեցան հողատէրերի սրտերը, որովհետև Թիֆլիսից նախնական սահմանաբաժան վարչութիւնից ծանուցադրեր ստացան, որ առաջիկայ սեպտեմբերի 18-ին պէտք է ընդունել տեղիս հաշտարար դատարանում նրանց վէճերը, որոնք յարուցվել են միջակայքին:

Ժամանակի Այժմ համարեա բոլոր հողատէրերը մեծ մաստանդութեան մէջ են, թէ մի գուցէ իրանցից պահանջվեն դրաւոր և օրինաւոր փաստեր ու հաստատութիւններ, իսկ շատերը կը դժուարանան ներկայացնել իսկ եթէ միայն վկաների ցուցումներով բաւականութիւն տրվի, այն ժամանակ զա մի մեծ բարիք կը լինի հողատէրերի համար, որովհետև իշխանութեան կողմից նշանակված աստիճանաւորին գումար չէ տրվում արքունի գանձարանից, որ նա կարողանայ վերականգնել վարձը, իսկ հողատէրերը պատրաստ են թէկուզ մի քանի տարվայ եկամուտը ծախսել և մի վկայի փութանակ 10 վկայ վարձել: Մեր խօսքերի ապացուցութեան համար իբրև օրինակ առաջ կարող ենք բերել Ղուլախի գիւղի աղալարն և ի վարմանը, որոնք Մեծ-Գեօնտուրա գիւղի արքունական հողը սեփականացնելու համար Զիզրաչէն և Փոքր-Գեօնտուրա գիւղերից մի քանի սուտ վկաներ էին ցոյց տուել, որոնք այժմ սուտ վկայութեան համար ընկած են քրէական յանցանքի տակ:

Յ. Փ.

ՆԱՄԱԿ ԱՂՍԱՏԱՓԱՅ

Օգոստոսի 30-ին

Պարսից Դահլ ամսին 27-ին երեկոյեան 7 1/2 ժամին հասաւ Աղստաֆայէ Եր նորին մեծութեան զնաքը կանգ առաւ կայարանի առաջ, զինուորական մուրիկան սկսեց պարսկական մարշը: Դահլին դիմաւորեցին Գանձակի նահանգապետը և ուրիշ բարձրաստիճան անձինք: Կայարանը դարձաւ էր: Գիշերվան առանձին գնացքով Բագրից եկաւ իշխան Կառավարչապետը և մնաց կայարանում մինչև Դահլին ճանապարհ դնելու: Դահլ գիշերեց Աղստաֆայում և առաւօտեան ժամը 9-ին ճանապարհ ընկաւ Զուլֆայի. վրայով Պարսկաստան:

Աղդրովկասեան երկաթուղին օգոստոսի 1-ից անցաւ կառավարութեան ձեռքը: Կարգադրութիւն կար յուլիսի վերջին փակել բոլոր գործերը: Օգոստոսի 1-ից բոլոր կայարաններում տրված

—Al c'est très bien.... Vous savez, maintenant nous sommes alliés avec la Russie.... (Հատ լաւ, շատ լաւ. դուք գիտէք որ մենք այժմ դաշնակից ենք Ռուսաստանի հետ):

ՊԱՐՏԻՋԻ ՀԱՅ ԳԱՂԱՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պարսիցի հայ գաղթականութիւնը ըստկացած է մօտ 300 հօգուց, որոնց թիւում կան և լուսաւորչական և կաթոլիկ հայեր և որոնք մեծ մասամբ թիրքապատակ են: Կոյմիայի մեծ մասը վաճառականներ են կազմում, ապա ուսանողներ, մօտ 60 հօգի (որոնցից 40 հօգի թիրքիացի հայեր են, իսկ մնացածները ռուսաստանցի), վերջապէս իրանց եկամուտով ապրող մի քանի հարուստ ընտանիքներ: Բայց այդ բոլոր հայերի վրէժ գրեթէ ոչինչ կապ ու համեմատութիւն չը կայ. հարուստ հայեր, ինչպէս իշխան Լուսինեան կամ Նուրբախանի առանձնացած են ապրում և չեն ընդունում իրանց մօտ ոչ հայ վաճառականներին, ոչ էլ հայ ուսանողներին: Եւ Լուսինեանի հետ ծանոթացայ. այդ նախկին աղքատը, որը յայտնի էր Ամբոսիոս վարդապետ Գալֆայանի անունով, այժմ թողել է արեղայութիւնը, պատվել է մի հարուստ իտալուհու հետ, ունի իր սեփական տուն հրաշալի այգիով, Avenue Victor Hugo փողոցում և կրում է այժմ Գիւի Լուսինեան անունը և աւելացնում է իր անունը «Ալբրապոն իշխան Երուսաղէմի, Կիպրոսի և Հայաստանի տիրութեան իրաւունքը ծանօթանալ իշխանի հետ և բացի սրանից գործ ունենալով նրա հետ նոր ձևի հայոց տառերի վերաբերմամբ, եւ այցելութիւն արեցի այդ նախկին Միլիթարեան ուսումնականին, որին պարտական ենք մի քանի հայերէն թարգմանութիւններով և հայերէն-ֆրանսիական:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսիացին փոփոխամիտ է, յաճախ է փոխում իր համոզմունքները, բայց ճանաչելով նրա ոգևորվող, յափշտակվող բնաստորութիւնը, վստահութեամբ կարելի է ասել, որ ամեն իր նոր յափշտակութեան մէջ նա անկեղծ է, ամբողջ սրբութիւն է նուիրվում իր նոր գնորդներին, կամ յափշտակութիւններ...

Ամբողջ Ֆրանսիան, կառավարչական շրջանները սկսած, մինչև ամբողջ, այս բոլորն ուսուսուէր է և Ֆրանսիացու բնուորութիւն ճանաչողները չեն կարող չը խոստովանել, որ Ֆրանսիացին իր այդ նոր քաղաքական տրամադրութեան մէջ էլ, ինչպէս միշտ, անկեղծ է: Ուրիշ բան է, թէ որքան ժամանակ կը տևի Ֆրանսիայում այդ տրամադրութիւնը, քանի որ յայտնի է, թէ Ֆրանսիացին, ինչպէս էլ անկեղծ կերպով յափշտակվող լինէր, իր փոփոխամիտ բնաստորութեան շնորհիւ երկար ժամանակ չէ կարող մնալ մի և նոյն տրամադրութեան մէջ, երկար ժամանակ անկարող է յափշտակվել մի և նոյն գաղափարով: Բայց ոմանք կարծում են, որ Ֆրանսիացու ռուսաստորութեամբ յափշտակվելը աւելի տեղական զգացմունք կը լինի, քանի որ այդ յափշտակութեան հետ միացած է աղքատիական մի յոյս, այն է որ Ռուսաստանի հետ դաշնադրութեան օգնութեամբ Ֆրանսիան վերջապէս

կը կարողանայ կրկին ձեռք բերել իր երկու կորցրած նահանգները:

Ինչ և իցէ, այս բոլորն Ֆրանսիական աղբը, սկսած իր ամենաբարձր դասակարգից մինչև ամբողջ սաստիկ ռուսաստանը է: Ռուս անունը վերին աստիճանի համակրելի է դարձել Ֆրանսիացուն, ռուսաց գրականութիւնն ու երաժշտութիւնը հետաքրքրում են նրան... Կոնկրետներում մէջ թարգմանվում և տպագրվում են ռուս հեղինակների բազմաթիւ գրուածներ, գրական կոնգրեստին անդամ, գրական զեկուցումների թիւում, մտնում է ռուսաց այժմեան գրականութեան վիճակի մասին զեկուցումը... Պարսիցում տեղի ունեցող բոլոր խնդիրներում, տօնախմբութիւնների մէջ, կաթնիներում, հանդիսաւոր ճաշկերպիւնների և զբօսանքների ժամանակ՝ «Մարտիլիզ» Ֆրանսիական աղբային եղանակից յետոյ անմիջապէս անվում է անպատճառ և ռուսաց աղբային օրհներգը, որը ընդունվում է ամեն անգամ բուռն ծափահարութիւններով, անվերջանալի bis-երով և «կեցցէ Ռուսաստան» ողբերով: Բաղադրականները:

Հետաքրքիրն այն է, որ և ամբողջ սաստիկ ողբերով լինելով ռուսաստորութեան զգացմունքով, վերաբերվում է այդ զգացմունքին կատարելապէս անկեղծ կերպով, հաւատարմացած լինելով, որ Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ հաստատուն դաշն է կապված արդէն:

Մի օր ցուցահանդիսի ռուսաց բաժնում պտտելով, եւ նկատեցի այդ բաժնի մի անկիւնում կովկասեան աղբային զեկուտով հագնված մի բաւական հասակաւոր մարդուն, որը նստած էր կովկասեան արդիւններով ծածկված մի մեծ սեղանի առջև: Այստեղ հանդէս էին զրկւած կով-

կասեան արծաթեայ քամարների, խանչանքների, կովկասեան շաւերի ու կովկասեան մի քանի կաւէ ամանների հետ միասին և ռուսաց անհայտ գործութեան մի քանի արդիւններ, ինչպէս օրինակ՝ ներկված փայտից շինված կոյիտ գալաներ և ամաններ... Դա երևի պէտք է ներկայացնել կովկասեան բաժնին: Կովկասեան այդ ողորմելի բաժնի յարգելի էկսպոնենտն էր մի պետերբուրգցի հայ, իսրայիւնցի աղքատուհին: Եւ մօտեցայ թիֆլիսի կառայում հանգնած այ. իսրայիւնցին ու սկսեցի նրա հետ հայերէն խօսել: Այդ ժամանակ մեզ չըջապատեցին երկու թէ երեք Ֆրանսիացի բանուորներ: Նախ սկսեցին նրանք մեծ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ լսել մեր խօսակցութիւնը և ապա նրանցից մէկը վստահացաւ դիմել ինձ հարցնելով.

—Ներքեք, պարոն, այդ ինչ լեզուով էք խօսում:

—Nous parlons l'arménien, պատասխանեցի ես:

—Al l'arménien, այդ շատ լաւ է, շատ լաւ է... Ռեբնն դուք երկուսդ հայրենակիցներ էք, և հանդիպել էք այստեղ ցուցահանդիսում...

—Այո, ասեցի ես:

—Բայց, ներքեք, շարունակեց բանուորնից մէկը, les arméniens de quel pays sont ils tributaires (Ինչ տէրութեան հարկատու, կամ հպատակ են հայերը):

—Մենք երկուսս ռուսահպատակ ենք, պատասխանեցի ես:

Պէտք է տեսնելք այդ բոլորն իմ նոր ծանօթ բանուորների ռուսաթիւնը: Ժպտաւ երեսին նրանք երբեք էլ հերթով սկսեցին սեղմել ձեռքս, բացականչելով.

Գրիգոր Արծրունի

այս է թէ Մոսկա պէյ այժմէն բանտարկուած է. կամ լաւ ևս իր ազգական քերթ Պաշրի փաշայի, որ Պաշրի ապիական եղբոր կառավարիչն է, տա- նը մէջ նստած է և հրաման ընդունած, որ դուրս չենէ: Կառավարութիւնը պարտաւարարանի պի- տի հաղորդէ թէ՛ դատաստանի հարկ չը կայ, վասն զի ինք կառավարութիւնը համոզված է, որ Մոսկա պէյ արդարև ի գործ դրած է այն ա- ման չարիքները, որ կը պատմուին, հետևաբար պիտի պատժուի, ուստի ինչ հարկ դատաստանի: Բայց եթէ այսպէս ըլլայ միթէ չը հաստատուի որ հայոց կողմանէ բոլոր պատմութեանն ստոյգ են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱԳՈՒՀՈՒ ԳԱՀԱԿԱՆ ՃԱՌԸ

Այս օրերս Վիկտորիա թագուհու գահակա- նաւոր, ինչպէս միշտ, փակվեցաւ անգլիական պարլամենտի նստաշրջանը ձմարի տէր և, այդ գա- հակա ճառը սովորաբար միատեսակ բովանդա- կութիւն է ունենում, բայց զբա հետ միասին անգլիական կառավարութիւնը պարտք է համա- բուծ մի քանի որոշ և ճիշդ կարծիքներ յայտնել քաղաքական գէթ ամենահարկաւոր և կենսաւոր հարցերի մասին:

Գահակա ճառը այս անգամ գուրկ է ալ- յատուկութիւնը, ինչպէս միշտ, գեղեցիկ գոյններով անգլիական լեզուով Մեծ-Բրիտանիայի ներքին դու- թիւնը և միւս պետութիւնների հետ ունեցած յարաբերութիւնը, կառավարութեանը բարձրագ- թիւններ է անում Անգլիայի ապագայ դարգա- ման համար: Այս անգամ Սթըրթի միջնորդու- թիւնը, ինչպէս պարզ երևում է, աւելի ձեռնու- է համարել թագուհու, կամ քաղաքի իրողութիւ- նը: Եւ հենց այդ պատճառով գահակա ճառը ոչինչ զբաղւած, հանգստացող սպաւորութիւն չէ թողնում: Եւ չէ էլ կարող թողնել, քանի որ մի կողմից՝ ճառի մէջ շատ գեղեցիկ գոյններով է նը- կարագրուած ամեն բան, իսկ միւս կողմից լծու- թունը դարձել է բանւորական շարժումների կեն- տրոն, իրականում շարժումնալից է բողոքել, իսկ դուրսը կան այնպիսի մեծ և յուզիչ ինքնիշխան, ինչպէս են կրկնել հարցը, թիւրքաց Հայաստա- նի խնդիրը, և քաղաքական ուրիշ կենսաւոր հար- ցեր:

Անգլիան միշտ զլիաւոր դերերից մէկն է կա- տարել արտաքին քաղաքականութեան գործում, նա ուղղութիւն է տուել մի քանի ազդեցութիւնների խնդիրը, այսինքն այդ նոյն Անգլիան, ոչինչ որոշ դիրք չը բռնելով, ոչինչ գործ չը կատարելով, և ոչինչ զբաղւած հետեանքը չը հասնելով, սփոփ- վում է Եւրոպայի առաջ միայն նրանով, որ գա- հակա ճառի մէջ ամեն բան գեղեցիկ գոյններով է ներկայացնում....

Տարաբաղաբար իրողութիւնը չէ պատասխա- նում այդ բոլորին և Սթըրթի միջնորդութեան այդ լաւ բաւարարիչ դիրքը իսկապէս մի ստուեր է գցում Մեծ-Բրիտանիայի քաղաքական այն նշա- նակութեան վրա, որով պարծնեցել է ամեն մի անգլիացի:

ՆԱՄԱԿ ԵՎ ԵՆԻՍՏԻՑ

Ստոկհոլմ, 20 օգոստոսի

Եթէ խոստացած չը լինէի արեւելագետների ժողովից պատական (Մշակիչ) մի երկու թղ- թակցութիւն գրել, մի բառ էլ չէի գրել, այն- պէս հրապուրիչ և այնքան սիրտ, միտք, աչք խելք ու ժամանակ զբաղող ուրիշ բաներ կան: Բայց ինչ արած, խոսք տուի՝ պէտք է գրեմ: Եւ արդէն 50 տարեկան եմ, աշխարհ եմ տե- սել, Էր տարի Եւրոպա եմ մնացել, սակայն այս երկրի լաւութիւնը, բարօրութիւնը, երջանիկ կե- ցութիւնը ուսի ու խելքս տարել են: Սկսեմ այն տեղից գրել, ուր որ սկսում է Սկանդինաւիան լուսաւորութիւնը:

Ի՞նչպէս քաղաքից չորս ժամով միջոցում չոգե- նաւով եկանք Հէլսինգֆորս, Ֆինլանդիայի մայրա- քաղաքը: Սա քաղաք չի ասուի, այնքան գեղե- ցիկ և այնքան հաճելի է, որ ասեմ թէ զարդա- ված, կոկոված հարս է: Ռուսիայի ոչ մի քաղաքը ոչ Օդեսան, ոչ Ռիգան, ոչ Վոսկրեսն, ոչ Պետեր- բուրգը կարելի է գեղեցիկութեան կողմանէ բաղ- դատել այս փոքր, ամառային, քաղաքային ու տղմուտ Ֆինլանդիայի մայրաքաղաքի հետ: Փողոցները մաքուր, աւազած, հարթ և կարգին, տները մէկը միւսից աւելի գոգորիկ և աւելի ճա- յակով շինված, ինչ ջրանցքներ և ջրուղիներ, ինչ զմայլելի մաքուր շոգենաւակներ և թիավար

նաւակներ: Տներ են, այգիներ են և ջուր տեսա- ծըր, բայց բոլոր թողած կանաչների մէջ: Ուր որ կարելի է մի ծառ տնկել՝ տնկել են, և ուր որ մի խոտ կարող է բուսնել՝ բուսցրել են:

Բայց գաւ սրտից հատարակաց պարտէզները տեսնու: Այսպիսի յեղատաշա թան են ոչ «Հազար ու մէկ գիշերի» մէջ եմ կարդացել, ոչ էլ բոլոր ֆարսերէն, տաճկերէն և արաբերէն գրքերում, երբոր դրանք սկսում են դրախտը նկարագրել: Եթէ Ղուրանի մեկնիչները Հէլսինգֆորսի ծաղ- կապաճոյճ վարդազարդ պարտէզները տեսած լի- նէին, անտարակոյտ կամ իրանց գաղափարը կը փոխէին, կամ կասէին թէ դրախտը հենց Հէլ- սինգֆորսն է: Այս քաղաքի շքեղութեան մասին միայն մի օրինակ գրեմ, բաւական է: Յայտնի է որ թէ Եփրատի գետի Ռուսիային է պատկանում, բայց ունի իր մասնաւոր օրէնքները, սահմա- նադրական ժողովները և իր մասնաւոր դռները: Այս Ֆինլանդիան Հէլսինգֆորսում մի այնպիսի ընդարձակ գեղեցիկ գոտանոց է չինել, որ եթէ հասարակ շինութիւն լինէր, իւրաքանչիւր գինւոր պէտք է 300 բուրբի տարեկան բնակարանի վարձ վճարէր: Եւ ինչ շքեղ մուգեւում, ինչ պատ- լական դրախտան, ինչ երեւելի համալսարան և այլն և այլն:

Շատ լաւ եղաւ, որ Հէլսինգֆորսից նաւով ծա- նապարհվեցայ Ստոկհոլմ: Առաջ գնացինք Էթ- նելը, յետոյ Հաֆո, այնտեղից Օբո (Abo) և յետոյ Օլանդիան կղզիների Մարիանամ քաղաքը: Այս ճանապարհորդութիւնը ծովի վրա տևեց 24 ժամ. բայց խիստ հանգիստ գնացինք, չը նայելով որ քա- մին փչում էր: Հէլսինգֆորսից մինչև Մարիանամ ծովը լի է փոքր կղզիներով և շոգենաւը ցերեկը և գիշերը անցնում գնում է սողակներով նրանց միջով, ինչպէս մի բարակ օձ: Հետո մի գերմա- նացի պրոֆէսոր կար կազանից, որ շատ ճանա- պարհորդած է Վալդայի վրա, նա ինձ ասեց թէ, գնում, քան թէ Վալդայի վրա Սափայ երկու ժամի չափ ծովի վրա մինչև Շուէդիա հասնելը եւ ծովի ալիքներից տանջվեցայ: Բայց հենց որ Շուէ- դիայի ափերին մոտեցանք՝ կրկին հանգիստ և խաղաղ գնացինք, ունենալով աշ ու ձախ այն գեղեցիկ փոքրիկ մանրիկ կղզիները զուրկանա- ներով և ամառանոցներով: Այդ եղբրեց մինչև Ստոկհոլմ հասնելը շոգենաւով տևեց 5-6 ժամ. խիստ զբաւիչ տեսարան էր:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

—Մեզ հետեւալ տեղեկութիւնն են հաղորդում Կ. Պոլսից. «Այժմ տէն և իրանցութիւնը ճարա- կած է Պոլսի. տարաքիթիկ հիւանդութիւնն է բայց ոչ մահաբեր, գլխաւորաբար հայ պանդուխտ- ները սկսած են բուժվել այդ հիւանդութիւնէն: Խղ- միրի մէջ ալ աւելի քան քսան հազար անձինք բուժուած են այդ հիւանդութիւնէն»:

—Հռոմից գրում են, որ Ռէշլի դուքսը աշնա- նը գալու է այստեղ:

—Եւրոպական մի քանի լրագիրներ այն կար- ծիքն են յայտնում, որ իտալական միջնորդ-նա- խազան կրկնապի մատը խառն է կրկնել գործե- րում, որ իբր թէ նա եռանդուն կերպով աշխա- տել է այդ կղզու վրա իրանականութիւններ առաջ բերելու գործի համար: Վերադարձով այդ գիւրը կրկնապի, յիշեալ մի քանի լրագիրները եղրա- կացնում են, որ նրա նպատակն է միացնել կրե- տէն Թունաստանի հետ, որը իր կողմից աշակ- ցի խառնալիքն Ամեն մի քաղաքական շարժման մէջ այդպիսի պատճառներ օրոնել, կը նշանակի մոռացութեան տալ բուն հարցը.—միթէ կրկնել շարժումները այդ կղզու ազգաբնակչութեան նեղ զրոյթեան ուղղակի հետեանքը չեն...:

—Գիւմանական բէլլիստագում շուտով պէտք է բնակին զինւորական նոր օրինագծեր:

—Թիւրքաց հայերի հարցի մասին Գլադստոնի հրատարակած նամակից յետոյ Եւրոպական բո- լոր երկրների շատ լրագիրներ վերջին օրերի ըն- թացեւում արտասովոր ուշադրութեամբ սկսեցին զբաղվել այդ խնդրով:

—Ժընէվի «Journal de Genève» լրագիրը ա- սում է. «Պ. Գլադստոն յանձն առաւ պաշտպա- նելու թիւրքահայերի դատը, ինչպէս մի ժամա- նակ նա յանձն էր առել բողոքների գործը պաշտպանելու: Յանկանում ենք նրան նոյն աշո- ղութիւնը, քանի որ նրա նախկին պաշտպանած ներք այն ժամանակից մեծ առաջադիմութիւն են արել և ամեն կերպ սպասցուցել են, որ արժա- նաւոր են իրանականութիւնը»:

նի են ազատամիտ Եւրոպայի համալիրութեան» —«Figaro» լրագիրը լսել է, որ Հռոմի պապ, Լևոն XIII վճռեց հեռանալ վատիկանից և ու- ղեւորվել Խալիլայից՝ կամ Աստորիա կամ Սպա- նիա:

—Նատալիա թագուհին սպասվում է այս օրե- րու Բելգրադում: Քաղաքի ազգաբնակչութիւնը զիտաւորութիւն ունի անմիջական ցոյցեր անել նախկին թագուհուն:

—Լրագիրները հաղորդում են, որ կոմս Հէր- բերտ Բիոմարկ Անգլիա է գնացել, որտեղ պիտի մնայ երկու շաբաթի չափ:

—«Standard» լրագիրը հաւատացնում է, որ սերբիական կառավարութեան պատերազմական պատրաստութիւնների պատճառով, ցրտութիւն է սկսել տիրել Բոլգարիայի և Սերբիայի կառավա- րութիւնների մէջ: Երկու փոքրիկ պետութիւննե- րի այդ տեսակ ընթացքը մտահոգութիւն է պատճառում Աւստրո-Ունգարիային և կաշնակի կոմսը այդ հանգամանքի մասին պիտի խորհ- դակցէ Ֆրանց-Յոսէփի կայսրի հետ:

ԻՍԼԱՄ ԼՈՒԻՐԵ

Կ. Պոլսից մեզ գրում են. «Կայսրի գահակա- լութեան տարեգրքին Պատրիարքը գնաց ար- քունի պալատ շնորհատրեւու. դրաւոր ուղերձ մը մատուց. այդ ուղերձի պատասխանն ալ կայա- րը իր մի թիկնապահին ձեռքով խրկեց Պատրի- արքարան իւր քաղաքաւար Սիւրէյա բաշայի ստո- րագրութեամբ: Գահակալութեան գիշերը Պատրի- արքարան շքեղապէս լուսաւորեալ էր, ինչպէս նաև Ազգ. Ժողովի Առնապետի բնակարանը: Պատրի- արքարանի մէջ ընդունելութիւններ եղան»:

Լոնդոնի «Pall Mall Gazette» լրագիրը մի թղթակից է ուղարկել Պարիզ՝ յատկապէս երեւ- լի Եփրատի հետ տեսնվելու համար: Ի միջի այ- րոց խոսելով Պարիզի մասին, Եփրատի ասանք, ինչ շատ կողմնաւոր մանկալ Պարիզում իմ այն բու- ղով, որը հազած եւ սովորաբար աշխատում եմ, բայց միայն թէ ինձ չը ճանաչէին, և եւ այդպի- սով կարող լինէի հանգիստ կերպով ամեն բան տեսնել: Յուշահանգըստ վիթխարի է Պարիզում ինձ շատ է դարմացնում այստեղի պարագու- թիւնը: Երբ են այս մարդիկ աշխատում ինչ են շինում նրանք: Ինչպէս երևում է այդ մար- դիկ պարագու մանկալ իրանց համար սխտեմ են դարձրել: Ինձ մտա եղան մի քանի ինժեներներ՝ կոկիկ հագնված և ձեռագիր ձեռքերով: Երբ են նրանք բան շինում: Գիւմանական եմ այս բոլորը հասկանալու:

Ֆրանսիացի մի արիստոկրատուհի, տիկին Լը- րէ, ինչպէս հաղորդում են Եւրոպական լրագիր- ները, ճանապարհ է ընկել դէպի Պարսկաստան հնազանդական հետազոտութիւններ անելու: Այդ կիրք մի քանի անգամ արդէն ճանապարհորդու- թիւններ է արել: Եւ մտադիր է այցելել Պարս- կաստանի ամենահեռու տեղերը: Պարսից Շա- հը խոստացել է աշակցութիւն ցոյց տալ այդ ճանապարհորդին:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 օգոստոսի «Новое Время» հաղորդում է, որ Անդրկասպեան երկրում շուտով կը մոցնվի կանոնաւոր մաքսային հսկողութիւն, մաքսատներ կը հիմնվին Արաբադում և Սև- րասիում: Ենթադրութիւն կայ յիշեալ նախնաւոր Պարսկաստանով ներմուծող կանաչ և սև թէյի վրա մաքս դնել, որ աւելի չը լինի թէյի գնից 80%:

ՑԱՐԻՑԻՆ, 29 օգոստոսի: Կերոսին գինը պու- ղին 3 կոպէկ պակասել է:

ԲԵՂԵՂ, 29 օգոստոսի: Բեղլեւում ուղղափառ եկեղեցու կառուցանելու համար Բարձրագոյն բարեհաճութեամբ կազմած ամենափոքր իր գործունէութիւնը սկսել է և օգնութիւն է խընդ- րում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 օգոստոսի: Այսօր Թագաւոր Կայսրի անուանակոչութեան պատճառով քաղա- քը դարձրված էր զոսկաներով: Ալեքսանդր Նիկոլայ. վանքում մաղկանք կատարվեց, երբ այնտեղ հասաւ հանդիսաւոր թափօրը խաւիկսկի մայր եկեղեցուց: Այսօր հրատարակված է Բարձ- րագոյն հրաման, որով Կայսրական քաղաքային զինուոր հրամանատար Ռիտերին շնորհվում է ու Վալդիմիրի առաջին կարգի չքանչաւ Շնորհված են ու Անայի առաջին կարգի չքա- նչաւներ: Կովկասեան դրաւանական ատեսանի նախագահ Եսկիմովին և Կովկասեան կառավար- յապետի գրասենեակի գործավար Աբարդաւա-

վին, Ե. Ստանիսլավի առաջին կարգի շքանշան
կոմիտեի կառավարչության գրասենյակի գոր-
ծավար Գուկելսկուն, Ե. Վալդիմիրի երրորդ կար-
գի շքանշաններ՝ Անդրեյովսկան մանկաբարձա-
կան ինստիտուտի տեսուչ Արտեմովին, և կոմիտե-
ական կառավարչության գրասենյակի գործավար
Լանգեյն:

ՊԵՏԵՐԲՈՐԴԻ, 30 օգոստոսի. «Новое Время»
լրագիրը լսել է, որ պետական խորհրդի առաջին
կայ նիստերում պէտք է ընծայի այն օրենսդրու-
թեան նախագիծը, որով կը մտցվի Սիբիրում
դատաստանական նոր գործավարություն և կը
զարգացվի այնտեղ աքսորյալներին ուղարկելը:
«Депе» լրագիրը լսել է, որ ենթադրություն կայ
Նիժնի-Նովոգորոդում զալ տարի կազմել մանր
արդիւնադրութեան համառոտական ցուցա-
հանդէս:

ՊԱՐԻԶ, 30 օգոստոսի. Յուզանդիսի կա-
ռավարչներին պատասխանելին, որ ցուցահա-
նանդիսի վրական ժամանակամիջոցը երկարա-
ցնելու համար չը կայ և նա անպատճառ կը փակ-
վի հոկտեմբերի 19 (31-ին):

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 31 օգոստոսի. Թագաւոր Կայս-
րի անուանակոչութեան պատճառով Կայսերա-
կան և Թագաւորական ընտանիքների անդամնե-
րը ներկայ էին ուստաց եկեղեցում կատարվող
«Держава» նաւը, որի վրա նախաճաշիկ էր
պատրաստած: Քաղաքը, նոյնպէս ուստաց և դա-
նիական ղեկավարները նաեւ զարդարված էին
զրօշակներով: Ժողովուրդը մեծ-մեծ խմբով
զրօշակներով օղջողոթնում էր ողբերկած աղա-
ղակներով:

ԲՈՒԴԱՊԵՏ, 31 օգոստոսի. Այսօր դատարա-
նում ակտիւ ընծայել առևտրական միջնորդու-
թեան գրասենյակի կառավարչ Կոկաուի գործը,
որ մեղադրվում է պետական փողերի վանկու-
մէ: Կոկաու ցոյց տուց, որ պետական քարտու-
ղարը չառաքում նրան հրամայել էր փոխա-
տուութիւններ տալ պետական գանձարանից պաշ-
տօնաններին և մինչև անգամ մինչևս Սեղէնի
նոյն գանձարանից ստացել է 100.000 զօղլէն
ընտրողական աղիտացիաներ առաջ տանելու
համար: Վերջինս ցոյց տուց, որ ստացիկ
տպաւորութիւն արին և զրանց առիթով գատա-
տանական ընծայութիւն կը լինի:

ՅԱՐԻՑԻՆ, 31 օգոստոսի. Կերօսի գին 3 կո-
պէկ պակասելու լուրը լսալ է:

ՍԱՄԱՐԱ, 31 օգոստոսի. Երէկ հանդիսաւոր
կերպով բացվեց Ալեքսանդր II-ի արձանը, որ
կառուցված է քաղաքի հաշուով և Շերմուկ ակա-
դեմիկի նախագծով:

ՍՕՖԻԱ, 31 օգոստոսի. Սամարայում Բոլշակովի
Աղաթիւ Թագաւորի արձանի բացման առիթով,
Յանկովի կողմնակիցները հրապարակել են իրանց
համախոհներին, որ ատորազրին Սամարայի քաղա-
քաղիկն ուղղելի հնազանդութիւն ժողովը պէտք է
վերջանաւ Կայսեր Ալեքսանդր II-ի համար հոգե-
հանգիստ կատարելով, բայց բոլորական կառա-
վարիչները պատճառաբանելով, որ իրը թէ մշտ-
քեր կարող են յուզվել՝ սկսեցին ձեռքակալու-
թիւններ անել: Ժողովը չը կայացաւ:

ԿԻՒ, 1 սեպտեմբերի. Թագաւորական Զեւարե-
վիչը Կայսերական «Յարեմա» նաւով՝ ժամանեց
այստեղ օգոստոսի 31-ին, 31/2 ժամին կէսօրից
յետոյ: Նաւահանգստի ամրոցները և պատերազ-
մական նաւերը ողջունեցին թնդանովաճգու-
թեամբ: Նաւամատոյցի վրա, Նորին Բարձրու-
թեանը ղեկավարեցին ծովագետը, Կիւլի բնորդա-
պան զօրքի ընդ օֆիցերները և բարձր Ֆրէդ-
րիկս, որ եկած է այստեղ Պետերբուրգից Նորին
Բարձրութեանը ուղեկցելու համար: Բոլոր շինու-
թիւնները զարդարված էին զրօշակներով: Նորին
Բարձրութիւնը այստեղից 4 ժամին 35 րոպէին
ուղևորվեց դէպի Հաննովեր:

ԶՄԻՍԼՈՒՆ, 1 սեպտեմբերի. Օգոստոսի 31-ին,
կէսօրին, հասաւ այստեղ Պարսից Շահը: Վանքի
զրան մօտ դիմաւորեց նրան բարձր հոգեւորակա-
նութիւնը. երգեցիկ խումբը երգեց ի պատիւ
Շահի յորինած օրհներգը: Շահը ամպօղանու-
տակ, առաջնորդված արքայիսկզուներով, Շա-
հը ուղևորվեց կարմիր մահուգով, որը ծածկված
էր թանկագին դիւղարով և ծաղիկներով: Գէպի
մարդ-տաճարը, որտեղ ողջունեց նրան Մակար
Կաթողիկոսը: Վեհափառ Կաթողիկոսի շնորհաւո-
րական ճառին, որի մէջ նա շնորհակալութիւն
էր յայտնում Շահի ուշադրութեան համար և յոյս
էր յայտնում, որ այդ ուշադրութիւնը կը տա-
րածի Շահի հպատակութեան տակ գտնված
իր հոգեւոր դաւանների վրա, — Շահը պատաս-
խանեց ուրախութիւն յայտնելով, որ առիթ ունի
երկրորդ անգամ այցելել 15 դարվայ օրաւայ-
րը, իր յարգանքը արտայայտեց Կաթողիկոսին
և յայտնեց որ ինչպէս միշտ, այժմանից ա-
ւելի էլ մեծ ուշադրութեամբ կը վերաբերվի դէ-
պի իր սիրելի հայերի կարիքները:

ՊԵՏԵՐԲՈՐԴԻ, 1 սեպտեմբերի. Սեպտեմբերի
1-ին երկրորդ ներքին փոխառութեան կատար-
ված արիւթում տարել են հետեւեալ տոմսերը:

№ սերիայի	Թուական	Գումարը	№ սերիայի	Թուական	Գումարը
1.083	6	200.000	9.280	1	1
6.114	46	75.000	4.794	16	2
16.488	41	40.000	2.340	48	
4.341	42	25.000	11.651	6	
2.026	30	10.000	16.768	13	2
18.129	38	10.000	2.219	3	
11.818	37	10.000	10.557	8	
326	41		2.617	6	4
13.593	20		2.729	49	
3.053	35		16.116	29	
12.865	49		14.308	5	2
19.155	9		12.135	13	
17.433	15		16.709	27	
17.003	1		5.488	25	
6.325	20		10.974	50	
19.363	6		12.761	28	
7.749	14		7.744	9	
16.108	27		4.911	3	
15.464	15		1.355	33	
17.924	37		13.702	38	

Խմբագիր - հրատարակող ԳԻՏԻՆՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԼԵԱՆՑԻ

ԳՏԵՎՈՒՄ Է ՍՈՒՈՒՄ, ԳԱՆՈՎԱԿԱՑԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՇԱՀՆԱԶԱՐՈՎԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 25-ից ՍԿՍՍԵ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԳԻՄՆԱ-
ԶԻՄԱՅԻ, ԲԷՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ, ԿԱԶԷՏՈՒԿԻ ԿՕՐԿՈՒՄԻ ԵՒ ԵՐԱՐՈՅԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ:

Ուսումնարանում, բացի դանդաղ գիմնասիական առարկաներից, աւանդ-
վում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լե-
զուներ:

Ուսումնարանում ընդունվում են երթեւեկներ, ԿԻՍԱՌՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ Ի ԹՈՒ-
ՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ:
Հասցէն. Тифлисть, Гановская улица, домъ Шахназарова.

3—5

ԿՈՒԿԻԱՅԻ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒՍԾԱԾԻՆ, եկեղեցու տղայոց
դպրոցի մէջ աշակերտների ընդունելութիւնը սկսված է օգոստոսի 28-ից և կը տևի
մինչև սեպտեմբերի 4-ը: Նոյն օրը նաև սկսվում է դասաւանդութիւնը:

1—2

ՄԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳԻՇԵՐՈՐԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՆԵՐ ՆՈՅՆ ՏՈՒՐ Հա-
մաձայն են պարտաստել աշակերտներ թէ արական և թէ իգական գիմնասիական
համար. համաձայն են նոյնպէս և ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ անել աշակերտների հետ Ցանկա-
ցողները կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тифлисть. Николаевская улица,
№ 80.

2—5

Հոգեւոր իշխանութեան թղթաւարտութեամբ Ս. ֆիլոսոֆի

ԶՐՈՑՑՆԵՐ

Դատարից ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Ա. մասը 2ՈՐՈՐԴ տարւայ համար, Բ. մասը ՀԻՆԳԵՐՈՐԴ տարւայ համար:
Դիմել թիֆլիս, Կենտրոնական և միջա զրաւաճառանոցներին. Երևան Կ. Դա-
տաւանին և Նոր-Բայազետ՝ Ս. Բատիկոյ. Новобаязетъ С. Батикъ.

3—5

ԲՈՇԿԱՊԵՏ ԳԻՏԻՆՈՐ ՏԵՐ-ՄԿԱՐՑԵԱՆ ՏԵՐ-ԳԻՏԻՆՈՐԱՆՑ (ԹԻՖԼԻՍԵՑԻ)
Տեղափոխվեց նոր բնակարան (Սապէհնայա փողոց, տուն Ալեքսանդրի № 7):

2—10

ԲԺԻՇԿ ՊՐԵՕԲՐԱԺԵՆԱԿԻ

Մանուկաւորութեան բժշկութեան և էլէկտրականութեամբ, ֆարադէական և զարկանական հոսանքով
ձեռքերի և ոտների անդամաւորութիւնից, ընկճատիւղից, ներկայիս հիւանդութիւններից և կոնս-
րակտուրայից (միանունների անդամաւորութիւն), բժշկութեան և կոնսերւիւն և խուրիւն անդամաւոր-
ութիւնից և նոյնպէս ընդունում է կանայքի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:
Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան
7 ժամից մինչև 8 ժամ: Ցուն Պոպովի Միջալեւան փողոցի անկիւն № 9 և Երևանի փողոցի № 2,
ինտենդանտութեան մօտ, վարձուքով կահաւորված սենյակների դիմաց:
Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства,
противъ Воронцовск. номеровъ.

2—14

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ Թ. Կարգի (Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտից) կամեւում է տեղ
ունենալ հայոց ուսումնարաններում: Հասցէն. Тифлисть, Михайловская улица,
домъ № 55.

1—3

Նօտար ԱՄԻՐՈՎԻ գրասենյակը գտնվում է ԳԱՆՈՎԱԿԻ փողոցի վրա, տուն
№ 6, Պոլիցմէյստրի վարչութեան կից և Նօտար Մամիկոնեանի հանդէպ: Գրասենյակի
գործողութիւնը սկսվելու է օգոստոսի 21-ից:

3—3

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ընկե-
րութեան կար ու ձեռք զարդը այժմ գտնվում է Սերգէյեւսկի փողոցում Շաղինեանցի
տանը և թէ աշակերտուհեաց ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 25-ին և կը տևի
մինչև օգոստոսի 31-ն, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ:

Այդ դպրոցը մտնել ցանկացողները իրանց խնդրագրի հետ պէտք է ներկայացնեն
ճիշական դպրոցի վկայականը:

5—5

ԹԻՖԼԻՍԻ Ս. ԳԱՅԵԱՆԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ վարչութիւնը յայտնում է թէ աշակեր-
տուհիների ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 25-ից:

3—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուկիա, վարձուքով արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ԲՈՒԿՈՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԲՈՇԿ ԻՍՏԱԿԱՆՆԵՐ—11/2—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԵՎԱԿԻ—11—12 ժ. ակադէմի, կոնսերւի, քիմի. ց. և սիֆիլիսի (վիրաբույ. և ատամագաւ.)
ԱՐՏԵՄԵՎԻ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի, կանանց ց.
ԿՈՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳՍԻՐՈՍԿԻ—5/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5/2—6/2 ժ. ներքին, երեխայոց և ջրային ց. (էլէկտրոտերապիա):
ԲԵՆԿԵՎԱԿԻ—7—8 ժամ.
Հիւանդանոցում են մահկաբարձուհիք՝ Երևանցեան և Արտաղեան:
Վճար—50 կ. Համախորհրդի (Կոստիլով) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԿՈՎԱԿԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅԻՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Հինդարթի, սեպտեմբերի 14-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգեւոր, նաւապետ
ԳԱՐԻԳԻ (GARRIGUES) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին, Բաթումում Լէմուրլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախիկի Ար-
ծրունի գալլերէում, № 114.

(2 և 9) 1—2

ՄԻ ՕՐԻՈՐԴ. որ աւարտել է քաղաքային պրօֆեսիոնալ դպրոցում, ցանկա-
նում է հայոց ծխական դպրոցներում Ձեռնարկով դասեր տալ Հասցէն կարելի է ի-
մանալ «Մշակ» խմբագրատանը:

5—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ

որ աւարտել է Բագուի ընկական դպրոցում, ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԱՍՆԱԻՐ ԴԱՍԵՐ ՏԱԼ: Կարող է
պատրաստել աշակերտներ միջնակարգ դպրոցների համար. համաձայն է և կրկնութիւնն և ե-
անել աշակերտների հետ Ցանկացողները հասցէն կարող են իմանալ «Մշակ» խմբագրատանը:

4—5